ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից 2017 թվականի 2-րդ եռամսյակում A-385/17 ծածկագրով «մեկ աղբյուրից գնում» ընթացակարգով իրականացված Նոր Խարբերդ և Առինջ գյուղերում «АСКУЭ» համակարգի ներդրման ծրագրի աշխատանքները իրականացնելու համար ինքնատար մեկուսացված հաղորդալարի մատակարարման գործընթացի մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ 2017

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի գնումների առանձին գործարքների

մոնիթորինգի արդյունքները

<u>Մոնիթորինգի իրականացման հիմքը՝</u> ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2014 թվականի հունիսի 25-ի №207Ա որոշման (այսուհետ՝ Որոշում 1) հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների կատարման մոնիթորինգի կարգ:

<u>Մոնիթորինգի օբյեկտը՝</u> «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ (այսուհետ՝ նաև Ընկերություն):

<u>Մոնիթորինգի առարկան՝</u> Ընկերության կողմից 2017 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում իրականացված գնումների առանձին գործարքները:

<u>Մոնիթորինգի նպատակը՝</u> Ընկերության կողմից կատարված գնումների առանձին գործարքների արդյունավետության ուսումնասիրություն և համապատասխանության գնահատում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի մարտի 26-ի №61Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում 2) սահմանված լրացուցիչ պահանջներին:

<u>Մոնիթորինգի իրականացման ժամկետը՝</u> 2017 թվականի օգոստոսի 15-ից մինչև 2017 թվականի նոյեմբերի 15-ը:

<u>Մոնիթորինգի մեթոդաբանությունը՝</u> Ընկերության գնումների առանձին գործարքների մոնիթորինգն իրականացվել է ընկերության կողմից մինչև գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրության, գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրության, մրցութային փաստաթղթերի և մատակարարի ընտրության ընթացակարգի մոնիթորինգի միջոցով:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի Նոր Խարբերդ և Առինջ գյուղերում «ԱՀԿՍԷ» համակարգի ներդրման ծրագրի աշխատանքները իրականացնելու համար ինքնատար մեկուսացված հաղորդալարի մատակարարման պայմանագիր

Հաշվի առնելով Ընկերության տեխնիկական տնօրենի 2017 թվականի մայիսի 31-ի №ԴԳ821 և հունիսի 12-ի №ԴԳ911 գրությունները, համաձայն որոնց՝ Նոր Խարբերդ և Առինջ գյուղերում «ԱՀԿՍԷ» համակարգի ներդրման ծրագրի աշխատանքները իրականացնելու նպատակով՝ անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել ինքնատար մեկուսացված հաղորդալար, որոշում էր ընդունվել «գնում մեկ աղբյուրից» ընթացակարգով «Կալուգագլավսնաբ» ԲԸ-ի հետ ինքնատար մեկուսացված հաղորդալարի մատակարարման պայմանագիր կնքելու մասին՝ 244,6 հազ ԱՄՆ դոլար առանց ԱԱՀ գումարով:

Հանձնաժողովի աշխատակազմն ուսումնասիրելով վերոնշյալ գնման փաթեթը հայտնում է, որ.

- Ընկերության գնման ընթացակարգի ընտրության որոշումը բավարար հիմնավորված չէ: Հաշվի առնելով այն փաստը, որ ինքնատար մեկուսացված հաղորդալար ձեռք բերելու համար Ընկերությունը 2017 թվականի ընթացքում տարբեր ընթացակարգերով գնում է իրականացրել, կարելի է փաստել, որ գնումները պատշաճ պլանավորելու դեպքում նշված ձեռքբերումները կարող էին իրականացվել մրցույթի արդյունքում:
- Ընկերության 2017 թվականի գնումների պլանում նախատեսված էր 1-ին եռամսյակում առաջարկների բաց հարցում ընթացակարգով (այսուհետ՝ ԱԲՀ) ինքնատար մեկուսացված հաղորդալարի և դրա ամրանի մատակարարման պայմանագրի կնքում՝ 456,3 մլն դրամ ընդհանուր արժեքով: Մինչդեռ 1-ին եռամսյակում հայտարարված ԱԲՀ-ի արդյունքում հաղթող մասնակցի՝ «Կալուգագլավսնաբ» ԲԸ-ի, հետ կնքվել էր պայմանագիր 163,6 մլն դրամի ընդհանուր արժեքով: Սակայն, նույն եռամսյակում ապրանքի հավելյալ քանակի պահանջ է առաջացել, ինչի համար էլ տարբեր մատակարարների հետ կնքվել են լրացուցիչ համաձայնագրեր: 2017 թվականի ընթացքում ինքնատար մեկուսացված հաղորդալարի ձեռքբերման գործընթացները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1
(մլն դրամ)

№	Գնման առարկայի ծածկագիրը	Գնման առարկայի անվանումը	Կնքված պայմանագրի արժեքը առանց ԱԱՀ	Մատակարարի անվանումը	Պայմա-նագրի կնքման եռամսյակը
1	A-62-17	Ինքնատար մեկուսացված հաղորդալարի և դրա ամրանի մատակարարում	163,6	«Կալուգագլավսնաբ» ԲԸ	1-ին եռամսյակ
2	A-10-17	ՍԻՊ հաղորդալարի մատակարարում նոր բաժանորդների էլեկտրական ցանցին միացման համար (լրացուցիչ համաձայնագիր)	18,6	«Եվրո Էլեկտրո» ՓԲԸ	1-ին եռամսյակ
3	A-202-17	ՍԻՊ հաղորդալարի մատակարարում նոր բաժանորդների էլեկտրական ցանցին միացման համար (լրացուցիչ համաձայնագիր)	32,3	«Եվրո Էլեկտրո» ՓԲԸ	1-ին եռամսյակ
4	A-164-17	Նոր բաժանորդների էլեկտրական ցանցին միացման համար ՍԻՊ հաղորդալարերի մատակարարում	15,6	«Եվրո Էլեկտրո» ՓԲԸ	1-ին եռամսյակ
5	A-236-17	Ինքնատար մեկուսացված հաղորդալարի և դրա ամրանի մատակարարման Ա-62-17 պայմանագրին կից լրացուցիչ համաձայնագիր	0,3	«Կալուգագլավսնաբ» ԲԸ	2-րդ եռամսյակ
6	A-313-17	Ինքնատար մեկուսացված հաղորդալարի և դրա ամրանի մատակարարման թիվ A-62-17 պայմանագրին կից լրացուցիչ համաձայնագիր	291,3	«Կալուգագլավսնաբ» ԲԸ	2-րդ եռամսյակ
7	A-385-17	Նոր Խարբերդ և Առինջ գյուղերում ԱՀԿՍԷ համակարգի ներդրման ծրագրի աշխատանքները իրականացնելու համար ինքնատար մեկուսացված հաղորդալարի մատակարարում	117,5	«Կալուգագլավսնաբ» ԲԸ	2-րդ եռամսյակ
8	A-246-17	Նոր բաժանորդների էլեկտրական ցանցին միացման համար ՍԻՊ հաղորդալարերի մատակարարում	49,4	«Եվրո Էլեկտրո» ՓԲԸ	2-րդ եռամսյակ
	Ընդամենը		**688,6**		

Վերոնշյալը հաշվի առնելով կարելի է փաստել, որ Ընկերությունը պատշաճ կերպով գնումների պլանավորում չի իրականացնում և գնումները կատարվում են ըստ անհրաժեշտության՝ համաձայն պահանջագրերի: Ընկերության գնումների իրականացման տվյալ քաղաքականությունը չի համապատասխանում Հանձնաժողովի Որոշում 2-ի 7-րդ կետին, համաձայն որի՝ գնումների կատարման նախընտրելի ընթացակարգերը պետք է ապահովեն մրցակցությունը գնումների իրականացման ընթացքում, մինչդեռ Ընկերությունը տրոհելով գնումները խուսափում է մրցութային ընթացակարգերով գնումներ կազմակերպելուց, որի ընթացքում կարող են ներգրավվել ավելի խոշոր մատակարարներ:

Այս համատեքստում հարկ է նշել, որ գնումների գործընթացների թերի կազմակերպման արդյունքում շուկայականից բարձր գներով ձեռք բերված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքները (շուկայական գները գերազանցող չափով) հաշվի չեն առնվի ընկերության սակագներում:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ/ԿԱՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹ

Ընկերության անվանում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ

Գնման անվանումը Նոր Խարբերդ և Առինջ գյուղերում «ԱՀԿՍԷ» համակարգի ներդրման ծրագրի աշխատանքները իրականացնելու համար ինքնատար մեկուսացված հաղորդալարի մատակարարման պայմանագիր

Գնման ծածկագիրը №A-385/17

Գնման ձևը Մեկ աղբյուրից գնում

ԲՈԼՈՐ ՓՈՒԼԵՐԸ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
1	**Համարժեք և համապատասխան գրառումները պահպանվում են գնումների գործընթացի ողջ ընթացքում և բավարար տեղեկատվություն են տրամադրում, ինչը թույլ է տալիս աուդիտ կամ անկախ ստուգում իրականացնել**	☑	☐	☐	

ԳՆՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
2	**Գնման հայտը հաստատել է կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը կամ վերջինիս կողմից լիազորված անձը**	☐	☑	☐	Պայմանագիրը կնքվել է հաշվի առնելով տեխնիկական տնօրենի գրությունները: Կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի կողմից գնման հայտը հաստատելու վերաբերյալ փաստաթղթեր փաթեթում առկա չեն:
3	**Գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրությունը ճիշտ է կատարվել**	☐	☑	☐	Գնումների պատշաճ պլանավորման դեպքում՝ տվյալ աշխատանքների իրականացման նպատակով Ընկերությունը պետք է ունենար պահուստային քանակ:

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
4	**Մինչև գնումների հրավերների հրապարակելն իրականացվել է համապատասխան շուկայի ուսումնասիրություն (փաստաթղթերը կցված են)**	☐	☐	☑	Ընկերությունը նմանատիպ ապրանքատեսակների գնում հաճախ է իրականացնում, հետևաբար գնային շուկան Ընկերությանը հայտնի է: Ներկայացրած շուկայի ուսումնասիրությունների մեջ համացանցից տպված փաստաթղթեր են: Հանձնաժողովի աշխատակազմի կողմից ներկայացվել են գնային ավելի ցածր առաջարկներ (կցվում է): Հարկ է նշել, որ Ընկերությունը կարող էր չտրոհել նմանատիպ գնումները և տվյալ գնումն իրականացնել ներգրավվելով ավելի խոշոր մատակարարների՝ ստանալով զեղչերի հնարավորություններ:
5	**Գնման գործընթացի արդյունավետ իրականացման, ոչ մրցութային եղանակով գնումների ծավալի նվազեցման նպատակով՝ ընկերությունը իր վեբ կայքում և գնումների էլեկտրոնային տեղեկագրուում հրապարակելուց բացի դիմե՞լ է արդյոք այլ միջոցների մասնակիցների շրջանակը ընդլայնելու և նրանց միջև մրցակցության խրախուսման համար**	☐	☑	☐	Գնումն իրականացվել է «մեկ անձից գնում» ընթացակարգով, ինչը տվյալ գնման համար հիմնավորված չէ:
6	**Մասնակից մատակարարների հայտերի ընդունման գործընթացում ապահովվել է արդարությունն ու անկողմնակալությունը**	☐	☑	☐	Գնումն իրականացվել է «մեկ անձից գնում» ընթացակարգով, ինչը տվյալ գնման համար հիմնավորված չէ:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
7	**Ապահովվել են հավասար մրցակցային պայմաններ հնարավոր մասնակիցների համար**	☐	☑	☐	Գնումն իրականացվել է «մեկ անձից գնում» ընթացակարգով, ինչը տվյալ գնման համար հիմնավորված չէ:
8	**Գնման առարկայի բնութագիրը հանգեցնում է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը**	☐	☐	☑	Գնումն իրականացվել է ոչ մրցութային ընթացակարգով:

9	**Գնումը օբյեկտիվորեն հիմնավորված է և համարժեք է այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է**	☐	☑	☐	Գնման ընթացակարգի ընտրությունը հիմնավորված չէ, քանի որ Ընկերությունը նախօրոք պլանավորելով իր պահուստները, կարող էր խուսափել տվյալ գնումն իրականացնելուց:
10	**Մանրամասն ներկայացված են գնման ընթացակարգի փաստաթղթերը**	☑	☐	☐	
11	**Պատշաճ ձևով ներկայացված են ապրանքների տեխնիկական բնութագրերը**	☑	☐	☐	
12	**Ամբողջությամբ և հստակ նկարագրված են ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարմեկնաբանությունը**	☑	☐	☐	
13	**Գնման առարկայի հատկանիշները պահանջ կամ հղում են պարունակում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանման, արտոնագրի, էսքիզի կամ մոդելի, ծագման երկրի, կոնկրետ աղբյուրի կամ արտադրողի**	☐	☑	☐	

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
14	**Հայտերի գնահատման ընթացակարգը ընթացել է արդար և անկողմնակալ**	☐	☐	☑	Գնումը իրականացվել է «մեկ անձից գնում» ընթացակարգով:
15	**Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին**	☐	☐	☑	Գնումը իրականացվել է «մեկ անձից գնում» ընթացակարգով:
16	**Հայտերի գնահատման ժամանակ ապահովվել է հատուցում արժեքի դիմաց**	☐	☐	☑	Հանձնաժողովի անձնակազմը Ընկերության ներկայացրած շուկայի ուսումնասիրության արդյունքների մոնիթորինգի արդյունքում պարզել է, որ շուկայում առկա են ավելի

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
	սկզբունքը				ցածր գներ:
17	**Պայմանագրի գնի հաշվարկը ներառում է տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը)**	☑	☐	☐	

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

	Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Չ/Ո	Մեկնաբանություններ
18	**Սահմանվել է վճարման ողջամիտ ժամկետ**	☑	☐	☐	
19	**Գնման պայմանագիրը կատարվել է պատշաճ մակարդակով**	☐	☐	☑	Կնքված պայմանագրի համաձայն՝ մատակարարումն իրականացվելու էր պայմանագրի ստորագրման պահից 60 աշխատանքային օրերի ընթացքում: Պայմանագիրը ստորագրվել է 2017 թվականի հունիսի 22-ին, հետևաբար՝ մատակարարման վերջնաժամկետն է սեպտեմբերի 14-ը: Համաձայն ընկերության 3-րդ եռամսյակի ընթացքում փաստացի կատարված գնումների մասին Հանձնաժողով ներկայացված հաշվետվության, պայմանագիրը կատարվել է մասնակի (30.09.2017թ.-ի դրությամբ մատակարարվել է 131,5 կմ մեկուսացված հաղորդալար ընդամենը 96,5 մլն դրամ արժեքով):
20	**Գնման առարկայի արժեքը համապատասխան է շուկայական արժեքին**	☐	☐	☑	Հանձնաժողովի անձնակազմը Ընկերության ներկայացրած շուկայի ուսումնասիրության արդյունքների մոնիթորինգի արդյունքում պարզել է, որ շուկայում առկա են ավելի ցածր գներ: Հարկ է նշել, որ Ընկերությունը կարող էր չտրոհել նմանատիպ գնումները և տվյալ գնումն իրականացնել ներգրավվելով ավելի խոշոր մատակարարների՝ ստանալով զեղչերի հնարավորություններ: